

ՆՈՐ ԱՄԱԳԻՐ ՄԸ ԹԵՐԱՆԻ ՄԷՋ

Անցնող տարուան Նոյեմբերին սկսեալ Քեհրանում լոյս կը տեսնէ մշակութային հասարակական «Ապագայ» ամսագիրը, որուն վերջին կրկու-երեք թիւերը արդէն հասած են խմբագրութեանս:

«Ապագայ» ամսագիրը տպագրուած է գունաւոր շապիկով, բնափր թուղթի վրայ եւ հայաստանեան ուղղագրութեամբ: Ամէն թիւ բաղկացած է 36-40 էջերէ, եւ ունի նաեւ պարսկերէն բաժին:

Ամսագրին խմբագիրն է իրանահայ հանրածանօթ, երիտասարդ եւ շնորհալի Քարգմանիչ՝ Էդիկ Պաղտասարեան (Է. Գերմանիկ): Հանդէսի աշխատակիցներու մէջ կ'երեւին վաստակաւոր գրողներ, մտաւորականներ, որոնցմէ լիշենք բանաստեղծ Ազատ Մատեան, Դոկտ. Ռուբէն Սարգսրեան, Հրաչ Ստեփանեան, Է. Մեհրաբեան, Խ. Խաչեր, Յ. Էղգարեան եւ ուրիշներ:

«Ապագայ» ամսագրի հասցէն հետեւեալն է.

P.O.Box 15176-117 Tehran-Iran

Ամսագիրը կրնաք ձեռք բերել Լոս Անճելըսի հայ գրատուներէն:

1999 - փետրուար - 13

«Մասիս»